# Համաձայնագիր Վարձակալության պայմանագրում կետի Փոփոխություն կատարելու մասին

ՀՀ ք. Երևան. Երկու հազար տասնհինգ թվականի դեկտեմբերի քսանութին

Մենք՝ մի կողմից "Գյումրու Արիե Կուփերսթոքի անվան վերականգնողական կենտրոն" Փակ Բաժնետիրական Ընկերությունը (պետական գրանցման վկայական 03 Ա 064632, տրված 21.05.2004թ., գտնվելու վայրը՝ Շիրակի մարզ, ք. Գյումրի Շիրակացու 31) ի դեմս տնօրեն Անահիտ Աղաջանյանի, անձնագիր AK 0630570, տրվ. 06.10.2010թ., 001-ի կողմից, հասցե՝ ք. Գյումրի Տ. Ճարտարապետի 5/4 շ. 13 բն.), մյուս կողմից, "Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի պետական կառավարչական հիմնարկը" (պետական գրանցման վկայական 01 Բ 000932, տրված 21.04.2004թ., գտնվելու վայրը՝ ք. Երևան -10, Կառավարական տուն 3/ ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Արտակ Աշոտի Գրիգորյանի անձնագիր AM 0389543, տրվ 25.07.2011թ., 043-ից, հաշվ. Մարտունի Աստղաձոր 4 փ. 16 տուն

Կնքեցինք սույն համաձայնագիրը հետևյալի մասին

1. Կողմերիս միջև 26.05.2014թ. կնքված Արաբկիր նոտարական տարածքի նոտար՝ Վերա Աբաջյանի կողմից գրանցամատյանի թիվ 1886 համարով վավերացված վարձակալության պայմանագրի /վարձակալության իրավունքի գրանցման վկայական N 04072014-08-0010 տրվ. 04.07.2014թ./ 1.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

„Սույն պայմանագիրը կնքվում է մինչև 31.12.2017թ. ժամկետով:

2. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կնքման պահից:
3. Համաձայնագրի կնքման հետ կապված ծախսերը կատարված է վարձակալի կողմից:
4. Սույն համաձայնագիրը կազմված և ստորագրված է չորս օրինակից, որոնցից մեկ օրինակը պահվում է Արաբկիր նոտարական տարածքի նոտարական գրասենյակում, իսկ մյուս օրինակները տրվում են կողմերին:
5. Սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական կադաստրի համապատասխան ստորաբաժանումում 30 /երեսուն/ աշխատանքային օրվա ընթացքում:

Ստորագրություններ

"Գյումրու Արիե Կուփերսթոքի անվան վերականգնողական կենտրոն" ՓԲԸ
Տնօրեն՝

"Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի պետական կառավարչական հիմնարկը"
աշխատակազմի ղեկավար՝

Երկու հազար տասնհինգ թվականի դեկտեմբերի քսանութին
Սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ Երևանի Արաբկիր նոտարական տարածքի նոտար Վերա Աբաջյանի կողմից:
Կողմերը սույն համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ, կողմերի ինքնությունը, գործունակությունը, իրավաբանական անձանց իրավունակությունը, նրանց ներկայացուցիչների լիազորությունները ստուգված են:
Գրանցված է գրանցամատյանում 5370
Գանձված է պետական տուրք և ծառայության վճար